Կ-1308[2]-06.04.2026-ՊԻ-011

Նախագիծ
Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» 2002 թվականի փետրվարի 6-ի ՀՕ-305 օրենքի 30-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«Դատարանի կողմից ձերբակալված կամ կալանավորված անձանց մասնակցությունը դատական նիստին տեսահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ (տեսակապի միջոցով) ապահովելու մասին որոշում կայացվելու դեպքում ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմն ապահովում է պահման վայրից ձերբակալված կամ կալանավորված անձի մասնակցությունը դատական նիստին:»:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է 2027 թվականի հունվարի 1-ից հետո անցկացվող դատական նիստերի վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ ԼՐԱՑՎՈՂ ԴՐՈՒՅԹԻ

Հոդված 30. Ապացուցողական գործողություններին և դատական նիստերին ձերբակալված կամ կալանավորված անձի մասնակցությունն ապահովելը

(վերնագիրը փոփ. 15.06.22 ՀՕ-249-Ն)

Ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը, քննիչի, դատարանի (դատավորի) հանձնարարականով, ապահովում է՝

1) ձերբակալված կամ կալանավորված անձանց ընդունելը և այլ վայրեր փոխադրելու համար պահակախմբին հանձնելը.

2) ապացուցողական գործողությունները, ինչպես նաև ամբուլատոր դատահոգեբուժական և այլ փորձաքննություններ անցկացնելու համար ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի տարածքում համապատասխան տարածքներ կամ շինություններ տրամադրելը:

Ձերբակալված կամ կալանավորված անձանց ապացուցողական գործողություններից կամ դատական նիստերից ազատելն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Դատարանի կողմից ձերբակալված կամ կալանավորված անձանց մասնակցությունը դատական նիստին տեսահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ (տեսակապի միջոցով) ապահովելու մասին որոշում կայացվելու դեպքում ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմն ապահովում է պահման վայրից ձերբակալված կամ կալանավորված անձի մասնակցությունը դատական նիստին:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1308-06.04.2026-ՊԻ-011/1) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1308[1]-06.04.2026-ՊԻ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ կառավարություն**	«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» **օրենքի նախագծի 1-ին հոդված**	Առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 272-րդ հոդվածում լրացվող 1.2-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 151-րդ հոդվածում լրացվող 3.2-րդ մասի կարգավորումները համապատասխանեցնել միմյանց: Ըստ այդմ, առաջարկում ենք	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			«Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-րդ հոդվածով Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 151-րդ հոդվածում լրացվող 3.2-րդ մասի 3-րդ կետում «ծանոթանալու գործի նյութերին» բառերից հետո լրացնել «, հետազոտելու բոլոր ապացույցները և վարույթի այլ նյութերը» բառերը:		
2.	**ՀՀ կառավարություն**	ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթում նոր	Նախագծերի փաթեթով կատարվող փոփոխությունների արդյունքում առկա է այլ օրենքի ընդունման անհրաժեշտություն: Հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսված կարգավորումները՝ անհրաժեշտ է համապատասխան լրացում կատարել նաև «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում: Ըստ այդմ, առաջարկում ենք «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 30-րդ հոդվածը լրացնել հետևյալ	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

		լրացվող «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ	բովանդակությամբ 3-րդ մասով. «Դատարանի կողմից ձերբակալված կամ կալանավորված անձանց մասնակցությունը դատական նիստին տեսահաղորդակցության տեխնիկական միջոցների օգտագործմամբ (տեսակապի միջոցով) ապահովելու մասին որոշում կայացվելու դեպքում ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմն ապահովում է պահման վայրից ձերբակալված կամ կալանավորված անձի մասնակցությունը դատական նիստին:»:		